20 մարտի 2020 թվականի N 323 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 197-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 24-ի «Իրանի Իսլամական Հանրապետության հետ հաղորդակցությունը ժամանակավորապես սահմանափակելու մասին» N 197-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 1-ին կետի 1-ին ենթակետի «է» պարբերության երկրորդ և երրորդ նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, սույն որոշման հավելվածի առաջինից տասնիններորդ տողերում նշված ապրանքների մասով ապրանքների փոխադրումը թույլատրվում է Պետական եկամուտների կոմիտեի կողմից՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գրավոր համաձայնությունը փոխադրման ենթակա ապրանքատեսակների և դրանց չափաքանակների վերաբերյալ: Մնացած ապրանքների փոխադրումը թույլատրվում է Պետական եկամուտների կոմիտեի կողմից՝ հաշվի առնելով

«Մեղրի» անցումային կետի բացթողումային հնարավորությունները և փոխադրվող ապրանքատեսակների չափաքանակներն ու առանձնահատկությունները: Սույն որոշման հավելվածում նշված ապրանքների փոխադրումն իրականացվում է հետևյալ եղանակներով. փոխաբեռնման ենթակա ապրանքները փոխաբեռնվում են կամ Մեղրիի անցումային կետի տարածքում կամ «Ագարակ Տերմինալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մաքսային հսկողության տարածքում, իսկ փոխաբեռնման ոչ ենթակա ապ-րանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքով տեղաշարժը և բեռնաթափումից հետո տրանսպորտային միջոցի վերադարձն Իրանի Իսլամական Հանրապետություն համակարգվում և հսկվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ցուցումներն ու առաջարկությունները.».

2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«	Խմորիչներ (ակտիվ կամ ոչ ակտիվ). այլ մեռած միաբջիջ միկրոօրգանիզմներ (բացի 3002 ապրանքային դիրքում նշված պատվաստանյութերից). հացաթխման պատրաստի փոշիներ	2102
	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	24
	Բնական գրաֆիտ	2504
	Ավազ, ոչ 26 խմբի մետաղաբեր ավազ	2505
	Կավիճ	2509
	Դոլոմիտ՝ չկալցինացված	2518100000
	Գիպս, անհիդրիդ	2520
	Կիր՝ չհանգած, հանգած և հիդրավլիկ	2522
	Ցեմենտ՝ սպիտակ, արհեստականորեն ներկած կամ չներկած	252321
	Ստեատիտ՝ բնական, տալկ	2526
	Դիզելային վառելիք	271019
	Երկաթի օքսիդ և հիդրօքսիդ, հանքային ներկանյութ	2821
	Սուլֆիդներ. պոլիսուլֆիդներ՝ որոշակի կամ անորոշ քիմիական կազմով	2830
	Ածխաջրածիններ՝ ցիկլային	2902
	Սպիրտներ՝ ապացիկլային և դրանց ածանցյալներ	2905
	Թթուներ ոչ պարբերական միակարբոն հագեցած և դրանց ածանցյալներ	2915
	Միացություններ՝ կարբոքսամիդային, ածխաթթվի ամիդային	2924
	Այլ ներկեր և լաքեր՝ քիմիապես մոդիֆիկացված բնական պոլիմերների հիմքով	32089099
	Պատրաստի չորացիչներ	3211
	Փայլաթիթեղ՝ դրոշմատպման համար	32121000

Տպագրական ներկ	32151990
Լվացող և մաքրող միջոցներ	3402
Սալիկներ, թերթեր, թաղանթ ու շերտեր կամ ժապավեններ պրոպիլենի պոլիմերներից բիակսալ ուղղվածության	39202021090
Սալիկներ, թերթեր, թաղանթ ու շերտեր կամ ժապավեններ այլ բարդ պոլիեթերներից	39206939
Սալիկներ, թերթեր, թաղանթ ու շերտեր կամ ժապավեններ պրոպիլենի պոլիմերներից	39202090
Սալիկներ, թերթեր, թաղանթ ու շերտեր կամ ժապավեններ պոլիամիդներից	39209219
Թուղթ և ստվարաթուղթ գրելու, տպագրության կամ գծագրական այլ նպատակներով օգտագործվող գլանափաթեթներով	48101330
Թեթևաքաշ կավճապատ թուղթ	48102200
Թուղթ և ստվարաթուղթ գրելու, տպագրության կամ գծագրական այլ նպա-տակներով օգտագործվող՝ թերթերով, որոնց կողմերից մեկի չափը 435 մմ-ից ավելի չէ, իսկ մյուսը բացված վիճակում 297 մմ-ից ավելի չէ	48101930
Սինթետիկ մանրաթելեր՝ սանդերքագզման կամ սանրագզման չենթարկված կամ մանելու համար այլ նախապատրաստում չանցած	5503
Արհեստական մանրաթելեր՝ չմշակված մանելու համար	5504
Չգործված կտորեղեն՝ ներծծված կամ չներծծված, պատվածքով կամ առանց պատվածքի, երկտակված կամ չերկտակված	5603
Պարկեր և տոպրակներ՝ փաթեթավորման համար	6305
Ապակյա միկրոգնդիկներ 1 մմ-ից ոչ ավելի տրամագծով	701820
Երկաթահամահալվածք	7202
Մետաղական տարաներ ներկերի համար՝ 20 լ տարողությամբ	73102910000
Ցինկի մանրափոշի, փոշի և թեփուկներ	7903
Մեքենաներ ֆլեքսոգրաֆիական տպագրության համար	84431600
Հեղուկացիր հոտավետ և նման հիգիենիկ հեղուկացիր, աղվափնջիկ և խծուծ՝ հարդարման քսուքի	9616

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. մարտի 20
Երևան